Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

Ուսանողների հաճախումների վիճակը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին

(արձանագրություն №2, 23.10.2018թ.)

Համալսարանի Գիտական խորհուրդը լսելով և քննարկելով ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների վիճակի և առկա խնդիրների վերաբերյալ ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս.Դավեյանի զեկուցումը, նշում է, որ ուսումնական գործընթացն ամբողջությամբ և ուսումնական պարապմունքներին աւսանողների հաճախումների հարցը գտնվում է համալսարանի Գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնամեթոդական կենտրոնի, ֆակուլտետների և ուսանողական խորհրդի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Համալսարանում մեծածավալ աշխատանքներ են տարվում ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման և ուսանողների հաճախումների բարձր ցուցանիշ ապահովելու ուղղություններով:

Այնուամենայնիվ դասաձախողումների բացառման, դասախոսների անհարկի փոխարինումների և ուսանողների անհարգելի բացակայությունների նվազեցման ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան:

Ելնելով վերոնշյալից Գիտական խորհուրդը որոշում է.

Հանձնարարել՝

1. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին և ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի պաշտոնակատար Ս.Դավեյանին.

1.1. Մեկ շաբաթյա ժամկետում դեկանների հետ համատեղ վերանայել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը, առաջարկություն ներկայացնել ուսանողի անհարգելի բացակայության առավելագույն այն ժամաքանակի վերաբերյալ, որից ավել բացակայության դեպքում ուսանողի նկատմամբ կկիրառվի տույժերի համակարգ:

1.2. Տասնօրյա ժամանակահատվածում համապատասխան դեկանների հետ քննարկումներ կազմակերպել առավել ցածր հաճախումների արդյունքներ գրանցված կուրսերի և դասախոսների վերաբերյալ, պարզել պատճառները և

ձեռնարկել համապատասխան միջոցառումներ հաճախումների վիճակը բարելավելու ուղղությամբ:

1.3. Ֆակուլտետների դեկանների հետ համատեղ ուժեղացնել վերահսկողությունը ուսումնական պարապմունքների կազմակերպման և իրականացման գործընթացների նկատմամբ:

1.4. Մեկամսյա ժամկետում ուսանողների հաճախումների ցածր արդյունքներ արձանագրված դասախոսների մոտ կազմակերպել դասալսումներ, իրականացնել քննարկումներ և դրանց արդյունքների հիման վրա ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

2. Ֆակուլտետների դեկաններին և ամբիոնի վարիչներին

2.1. Մեկ շաբաթյա ժամկետում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ներկայացնել ծրագիր - առաջարկ ուսումնական կարգապահության բարձրացման և ուսանողների հաճախումների պատշաճ մակարդակ ապահովելու ուղղությամբ:

2.2. Մեկ շաբաթյա ժամկետում ճշտել առավել շատ անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների ցուցակները, ուսանողների հետ տանել անհատական աշխատանքներ՝ հաճախումները բարելավելու ուղղությամբ:

2.3. Մշտական հսկողություն սահմանել ուսումնական կարգապահության և ուսանողների հաճախումների նկատմամբ, բացառել դասաձախողումները, իսկ դրանց առկայության դեպքում լրացումները կատարել սահմանված կարգին համապատասխան:

2.4. Ամբիոններում ապահովել արտադրական ոլորտից և այլ բուհերից հրավիրված 0,25 և 0,5 հաստիքով աշխատող դասախոսների կողմից ուսումնական պարապմունքների անցկացումը՝ բացառելով փոխարինումները:

ԳԻՏ.ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ